ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ N - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից «Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 31761/04 գանգատով 2009 թվականի դեկտեմբերի 1-ին կայացված վճռի պահանջները կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը 2010 թվականի 2-րդ եռամսյակում հատկացնել 1745 (հազար յոթ հարյուր քառասուն հինգ) եվրոյին համարժեք դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում» հոդվածով)։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունելու անհրաժեշտությունը պայմանավորված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներն անվերապահորեն կատարելու՝ Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած պարտավորության կատարման հրամայականով:

Վճռի կատարման պարտադիր պայմաններից մեկն էլ դիմումատուի խախտված իրավունքների համար Եվրոպական դատարանի կողմից սահմանված արդարացի փոխհատուցման գումարի վճարումն է:

Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից «Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 31761/04 գանգատով 2009 թվականի դեկտեմբերի 1-ին կայացված վճռի՝ Հայաստանի Հանրապետությունը նշված գործով վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում

պարտավոր է առաջին դիմումատուին վճարել 365, երկրորդ դիմումատուին՝ 380 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ որպես նյութական վնասի փոխհատուցում և 1,000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ երկու դիմումատուներին միասին՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում: Նշված գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 2010 թվականի մարտի 1-ին, հետևաբար, վճռի պահանջների կատարման վերջնաժամկետը 2010թ. հունիսի 1-ն է: